



ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԺԵ ՏԱՐԻ, ԹԻԻ 3.

1857

ՓԵՏՐՈՒԱՐ 1.

քարոյական

Ա.Ռ.Ա.Ծ.Ք

Հարցմունք և Պատասխանիք :

Ի՞նչ է առակը .

— Ա՛ճիւ մը զոր փորձը կը թելադրէ, և հասարակաց կարծիքը կ'ընդունի :

Ի՞նչ բանի վրայ կայացած է փորձը .

— Իմաստութեան տուած դասերուն վրայ :

Ի՞նչ է կարծիքը .

— Աշխարհիս թագաւորը :

Ո՞վ կը հրամայէ աշխարհի .

— Անիկա որ իրաւցրնէ հզօր է :

Ի՞նչ կերպով կը գործէ հզօր մարդը .

— Ս'իշտ խելքով :

Ի՞նչ կերպով կը գործէ տկարը .

— Տկարը կամ հաճոյից համար կը գործէ, կամ կարօտութեան :

Ի՞նչ կը վաստըկի ո՞վ որ խելքի կը հետեի .

— Կարօտութե՛ հրամաններուն չըհնազանդիր :

Կերազանց ուժէ մը ի՞նչ բան առաջ կու գայ .

— Կերազանց տէրութիւն մը :

Առաքինութիւնը ինչո՞վ սնունդ կ'առնու .

— Հակառակութեամբ :

Ինչո՞վ ոյժ կ'առնու մարմինը :

— Աշխատութեամբ, մարմնական կրթանօք և չափաւորութեամբ :

Ինչո՞վ կը զօրանայ հոգին .

— Ախանձորդութեամբ և հակառակութեամբ :

Ինչո՞վ կը բարձրանայ միտքը .

— Ս'աւժութեամբ :

Ինչո՞ւ մարդիկ այնչափ տկար միտք ունին :

— Մասն զի այնչափ խորհող մարդկանց մէջ՝ ամենաքիչ անձինք կը գրտուին որ սրտով մտածեն :

Մարդուս ամբողջ ոյժը ինչ բանի վրայ կայացած է .

— Իրեն կարողութեանց միաբանութեանը , գործունէութեան և առաքինութեանը մէջ :

Ինչ բանի վրայ է ազգի մը ոյժը :

— Օճանիկա կազմող մարդկանց մասնաւոր ուժոյն միաբանութեանը մէջ :

Ինչ բանով առաջ կրնայ երթալ ազգ մը .

— Միաբանութեամբ , ուժով , խելքով , առաքինութեամբ և հաւատքով :

Ինչ կերպով իրարու հետ միաբան կրնան կենալ մարդիկ .

— Երբոր վրանին իշխողը արդարութիւն և խոհականութիւն գործածէ . իշխեալք՝ իշխողին վրայ սէր ունենան , երբոր ամենքը սիրեն զհայրենիս , մեծարեն հայրենական օրէնքներն ու սովորութիւնները և իրարու վրայ փոխադարձ վստահութիւն ունենան :

Ինչ է փոխադարձ վստահութիւնը .

— Մարդկային կամաց ուղղութեանը և բարութեան սրբազան գրաւ մը :

Որ կապերն են որոնցմով մարդիկ ընկերական կ'ըլլան .

— Կրօնքով՝ որ թշուառաց մխիթարութիւն է , բարեխառնութեամբ՝ որ մայր է արդարութեան , միաձայնութեամբ որ քաղաքաց և գերդաստանաց զխաւոր պահպանն է :

Ինչ կերպով կը պահպանուի տէրութիւն մը .

— Մեծագոյն զօրութեամբ մը , որ է՝ Երդարութիւնը :

Օջրաւոր մը ինչով կը յաղթուի .

— Ուրիշ զօրաւորէ մը :

Ինչ բանի ետևէ կ'ըլլայ զօրութիւն ունեցող մարդը .

— Կուզէ որ ամէնքը իրեն պատիւ տան . և երբոր տեսնէ որ զինքը մեծարող մը չկայ , կատաղութենէն ինքիրմէ դուրս կ'ելլէ :

Ինչ բան կը փնտռէ տկարը .

— Պաշտպանութեան ետևէ կ'ըլլայ . և երբոր զինքը պաշտպանող մը չունենայ՝ կը յուսահատի :

Ինչ կ'ընէ ուժով մարդը .

— Ելելի կ'ուզէ մեռնիլ՝ քան թէ ուրիշի տեղիք տալ :

Ինչ կ'ընէ տկար մարդը .

— Եթա վախնալէն կը սկսի . վերջը գլուխը կը ծռէ , ետքը ուսը , յետոյ ծնկան վրայ կու գայ , անկէ գետնի վրայ կը տարածի կ'իյնայ . վերջապէս կը մեռնի՝ չմեռնելու համար :

Ինչ կերպով կրնայ մէկը թշնամեաց յաղթել :

— Ուժով , հանճարով , ու երբեմն նաև հնարագիտութեամբ :

Ինչ յատկութիւնք պիտի ունենայ պատերազմող մը .

— Եսպաստակի յարձակմունք , գայլու փախուստ , վարազի ընդդիմադրութիւն :

Որն է աշխարհիս մէջ գտնուած գեղեցիկ արարածը .

— Եւաքինի մարդը :

Ինչ բանէ առաջ կու գայ ախտը .

— Նշմարիտ հաճոյքը սուտ հաճոյիցմէ ընտրել չգիտնալէն :

Որն է ամենէն աւելի ախտաւոր արարածը .

— Սայրենեաց մէջ բամբասողը , ընտանիներուն մէջ շողոքորթը :

Որոնք են ամենէն աւելի վնասակար գազանները .

— Ինտառաց մէջ վագերքն ու առիւծները . իսկ քաղաքաց մէջ վախառուք ու գողք :

Որն է ամենէն աւելի բարեկարգ քաղաքը .

— Ուր ոչ բժշկաց և ոչ փաստաբանաց կարօտութիւն կայ :

Երջանիկ սեպուելու համար ինչ հարկաւոր է .

— Մարմնոյ առողջութիւն , հոգւոյ հանդարտութիւն , բաղդի բարիք և անկեղծ բարեկամք :

Ուշ ծերանալու համար ինչ բան հարկաւոր է .

— Կեղերէ հեռու կենալ , բարե-

խառն կեանք անցընել, դատարկութե-
նէ փախչիլ :

Ի՞նչ բան չեն կրնար ընել հարիւր
բժիշկք .

— Կամաւոր խենդ մը առողջացընել :
Լ՛նմիտը ի՞նչ բան չկրնար ընել :

— Ստածել և լուել :

Ի՞նչ հանրապէս ի՞նչ կ'ընէ իմաստունը .

— Վիչ կը խօսի, շատ կը մտածէ :

Խորհրդապահութիւն չունեցող մար-
դը ի՞նչ բանի կը նմանի .

— Կնիք չունեցող նամակի մը :

Ի՞նչ կը վաստակի ստախօսը .

— Լ՛յն՝ որ երբ ճշմարիտ ալ զրու-
ցէ, հաւտացող մը չգտնուիր :

Ի՞նչ է սուտ բարեկամը .

— Կեղծ դրամ մը :

Ի՞նչ բանի կը նմանի ստախօսը .

— Հողմոյ շտեմարանի մը :

Ի՞նչ բան արհամարհելի է կնիկ մար-
դու մը վրայ .

— Լ՛ներեսութիւնը :

Հապա որն է մեծարանոց արժանի .

— Լ՛մօթխածութիւնը :

Ո՞րն է ամենէն աւելի դիւրին բանը .

— () դու մէջ աշտարակ շինել :

Ի՞նչ բաներ են զորոնք մէյմը կոր-
սընցընելէն ետքը չենք կրնար նորէն
ստանալ .

— Դամանակ և պատիւ :

Պատիւ ստանալու համար ի՞նչ ընե-
լու է .

— Պատուով ապրելու է :

Լ՛խտէն ի՞նչ բան առաջ կու գայ .

— Վերութիւն :

Ո՞ր և իցէ յանցանք դիւրացընողը ո՞ր
բանն է .

— () ըինակը :

Ո՞ր տեղուանքն են զորս դժուարին
է գտնել .

— Ղճմարտախօս ծախողի մը խա-
նութ . վաճառականի մը դրամատեղի՝
ուր ուրիշին մնասովը սխալ հաշիւ չը-
լուի, և գինետուն մը՝ ուր անառակ խօ-
սակցութիւնք չըլլան :

Ո՞ր բաներն են ամենէն աւելի դը-
ժուարին .

— Ինքզինքը ճանչնալ, անձին յաղ-

թել, ճշմարիտ բարեկամ ըլլալ, և բա-
րեկամ մը պահպանել :

Ո՞րոնք են դիւրագոյն բաները .

— Խորհուրդ տալ, յանդիմանել,
ինքզինքը խաբել թէ դիմացինը ճանչ-
ցաւ, բարեկամի անուն ունենալ :

Ո՞րոնք են ամենէն աւելի սիրելի բա-
ները .

— Հայրենիք, ծնողք, բարեկամք :

Ո՞վ է ամենէն աւելի արդար .

— Դամանակ :

Ո՞վ է ամենէն աւելի զօրաւոր .

— Ղճմարտութիւն :

Ո՞րն է ամէն բանի հետ յարմարող .

— Յոյս :

Ո՞րն է ամէն բանէ գերազանց .

— Լ՛ռաքինութիւն :

Ո՞րն է կատարելագոյնը .

— Լ՛ստուած :

Ո՞րն է ամենէն աւելի անհաստատ .

— Սարդկային կեանք :

Ո՞րոնք են պատուականագոյն բա-
ները .

— Լ՛ռողջութիւն և ճշմարիտ բարե-
կամութիւն :

Ո՞րն է դժնդակագոյնը .

— Լ՛պերախտ սիրտ մը :

Ո՞րն է ամենէն աւելի անվստահելի
բանը .

— Ը ատախօս մարդուն տուած
խոստումները :

Ո՞րն է ամենէն աւելի մխիթարական
բանը .

— Ս՛եզմէ աւելի խեղճ մը տեսնել :

Ո՞րն է գլխաւոր պարտականութիւնը .

— Ընողաց հնազանդութիւնը :

Ո՞րն է պատուականագոյնը .

— Հայրենի երկրին օրինաց հնա-
զանդիլը :

Լ՛ստուծոյ առջև իմն է ամենէն ա-
ւելի հաճոյականը .

— Լ՛ռաքինին դրուատելը :

Ի՞նչ պէտք է ընել առաքինի աղքա-
տի մը .

— Կախ օգնել իրեն, ու ետքը գո-
վել զինքը :

